

ՈՃԱԳԻՏԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Ա. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Ոճագիտությունը, որպես լեզվաբանական գիտաճյուղ, ունի իր կարգերն ու հասկացությունները՝ ոճ, ոճական երանգավորում, ոճական միջոցներ, ոճնույթ (ստիլիսմա) և այլն, հատուկ շեն լեզվաբանության մյուս բաժիններին:

Սակայն պիտի ասել, որ տարակարծություններն ու վիճելի հարցերը շատ են ոչ միայն ոճագիտության ուսումնասիրության առարկայի, այլև ոճագիտական հիմնական հասկացությունների ըմբռնումների ու մեկնաբանությունների մեջ:

Ոճաբանական գրականության մեջ հաճախ են գործածվում հուզաբարտահայտչական երանգավորում, ոճական երանգ, ոճական արժեք, ոճական եղանակություն, ոճական միջոցներ՝ հստակ շահամանազատելով կամ շտարբերակելով այդ հասկացությունները: Իսկ հայերեն լույս տեսած ոճաբանական ուսումնասիրություններում էլ այդ հարցերին գրեթե չեն անդրադարձել: Մինչդեռ ոճագիտական հասկացությունների ու դրանց համապատասխանող տերմինների (եզրույթների) հստակ տարբերակումը, ինչպես նաև գործառական տարբերակներով պայմանավորված լեզվական միջոցներին հատուկ հուզաբարտահայտչական երանգների բացահայտումը անշափ կարևոր են ոճաբանական վերլուծությունների համար: Ավելին, լեզվի գործառական ոճերի սկզբունքների որոշումը պայմանավորված է հենց նրանով, թե ինչպես ենք մեկնաբանում ոճագիտության համար կարևորություն ներկայացնող այդ հիմնական հասկացությունները՝ ոճական երանգավորում, ոճական եղանակություն, ոճական միջոցներ: Ելնելով խնդրի կարևորությունից՝ սույն հոդվածում կանգ ենք առել հենց այդ հարցերի վրա:

Ոճագիտական հասկացությունների մեկնաբանման մեջ եղած տարակարծությունների հիմնական պատճառներից մեկը լեզվի և խոսքի հակադրությունն է: Տարբեր ոճագետ-լեզվաբաններ ոճական իրողությունները փնտրում են կա՛մ լեզվի համակարգում, կա՛մ խոսքում, ներլեզվական երևույթների մեջ, կա՛մ արտալեզվական գործոններով պայմանավորված խոսքային գործունեության մեջ²: Եվ ոչ միայն դա: Մեր կարծիքով կարևոր պատճառներից մեկն էլ այն է, որ տարբեր ոճագետներ իրենց ուսումնասիրություններում սահմանափակվում են միայն գեղարվեստական խոսքի շրջանակներով, որի հետևանքով էլ գեղարվեստական խոսքին հատուկ ոճական իրողությունները դիտում են որպես գրական լեզվին բնորոշ երևույթներ: Սակայն դեռ դարասկզբին նշանավոր ոճագետ Շ. Բալլին իր «Տրակտատ ֆրանսերենի ոճաբա-

¹ Տե՛ս Ս. Մելիոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1984, Գ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Երևան, 1990:

² Տե՛ս «Трудистические исследования», М., 1972, էջ 7:

նության» աշխատության մեջ սխալ է համարում գեղարվեստական գրական-
նության լեզվին բնորոշ երևույթները գրական լեզվի ոճական իրողություն-
ների հետ նույնացնելը: «Ինչքան մոլորություններ է ծնել քսանդարյա սովոր-
ույթը՝ ուսումնասիրել լեզուն գրականության միջոցով»³, — գրում է Բալլին:

Նման միակողմանի մոտեցումն արտացոլում է գտել ոչ միայն ոճաբա-
նական վերլուծություններում, ոճագիտության բնորոշման, նրա առարկայի ու
խնդիրների որոշման, այլև ոճագիտական հիմնական հասկացությունների մեկ-
նաբանման մեջ:

1. Ոճագիտության հիմնական հասկացություններից մեկը ոճի ըմբռնումն
է: Կարելի է ասել, որ այն ոճագիտության փորձաքարն է, քանի որ ամենա-
տարբեր մեկնաբանությունների ու տարակարծությունների տեղիք է տվել: Ոճ
տերմինի բազմիմաստությունը նկատի ունենալով՝ ակադեմիկոս Վ. Վինոգրա-
դովը գրել է. «Արվեստագիտության, գրականագիտության և լեզվաբանության
բնագավառում դժվար է գտնել ավելի բազմանշանակ ու հակասական տեր-
մին և նրան համապատասխանող ավելի երեւուն ու սուբյեկտիվորեն անորոշ
հասկացություն, որքան ոճ տերմինը և ոճ հասկացությունը»⁴:

Վերջին տարիներին լույս տեսած ոճաբանական գրականության մեջ յու-
րաքանչյուր հեղինակ յուրովի է մեկնաբանել այդ հասկացությունը: Մեր նը-
պատակից դուրս է այդ հարցերի մանրամասն քննությունը, միայն ասենք,
որ ոճ հասկացության տարբեր մեկնաբանություններն ու տարակարծություն-
ների բազմազանությունը, ինչպես այդ նկատում է Մ. Կոժինան, բացատրվում
է մի կողմից ոճագիտության զարգացման պատմական ընթացքով, այդ գի-
տաճյուղում ձևավորված տարբեր ուղղություններով, որոնցից յուրաքանչյուրը
տարբեր մեկնաբանություններ է տալիս ուսումնասիրության իր առարկային,
մյուս կողմից՝ ոճ հասկացության բարդությամբ⁵:

Ոճ բառը բազմիմաստ է. «Նոր հայկազյան բառարանում» բերված են
այդ բառի բազմաթիվ նշանակություններ (ծղոտ, ցողուն, այդ ծղոտից գործ-
ված զամբյուղ): Դրանց կողքին և այսպիսի իմաստներ՝ կարգ բանի կամ պատ-
մելու ձև, եղանակ, խոսքի կամ գրերի դասավորություն, կարգ, օրեն, կանոն
(է կարգաւորեալ դասաւորութիւն և շաղկապեալ շար իրաց և բանից կամ գրոց
և ընթացից կենաց...): Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառա-
րանում» բացի վերը նշված իմաստներից բերված են և այսպիսի նշանակու-
թյուններ. 1. մտքերն իրար հետ շարահյուսելու, միտք արտահայտելու եղա-
նակը, 2. որևէ հայտնի հեղինակի միտք արտահայտելու կերպը, որով նա
բնութագրվում է, 3. մի քանի բառից բաղկացած կտրուկ խոսք (դարձվածք),
4. շինությունների զանազան ձև և այլն:

Ոճ բառը այսօր լայն գործածություն ունի ոչ միայն արվեստի, գրական-
նության ու ճարտարապետության, այլև լեզվաբանության մեջ:

Գրականության մեջ ոճը ընդհանուր բնորոշումով գրողի գեղարվեստական
մտածողության դրսևորումն է լեզվական միջոցներով, նրա լեզվամտածողու-
թյան ինքնատիպ կիրառությունը: Այս բնորոշումը ինչ-որ շափով նեղացնում
է «գրողի ոճ» հասկացությունը: Լայն առումով գրողի ոճը նրա գեղարվես-
տական մտածողության ամբողջական համակարգն է, կերպարներ կերտելու
արվեստը, արտահայտչամիջոցների, գործածած լեզվական տարրերի ամբող-
ջությունը, որոնք միասնաբար բնորոշում են գրողի ոճական դիմագիծը: Ավե-
լին, գրողի ոճը նրա տաղանդի առաջին արտահայտությունն է, բնությունից

³ Ш. Балли, Французская стилистика, М., 1961, с. 37.

⁴ В. В. Виноградов, Проблема авторства и теория стилей, М., 1961, с. 7.

⁵ См. А. Н. Кожина, Стилистика русского языка, М., 1977, էջ 33:

նրան տրված շնորհը, նրա ինքնության դրսևորումը: Այնպես որ սխալ է գրողի ոճը հասնեցնել միայն լեզվական կողմին, պատկերավորման ու արտահայտչական միջոցների գործածությանը, որքան էլ որ կարևոր լինի դրանց դերը գրողի ոճի ձևավորման մեջ:

Հասկանալի է, որ լեզվաբանական գրականության մեջ ոճ բառը գործածվում է այլ իմաստներով: Պիոտրովսկին, օրինակ, ոճ ասելով հասկանում է լեզվական նյութից ընտրություն կատարելու սկզբունքը՝ այն համարելով ոճագիտության առաջին գիտական հասկացությունը⁶:

Լեզվական ըմբռնումով ոճ ասելով հասկանում ենք ոչ միայն հաղորդակցման պայմաններին, իրադրությանը և նպատակին համապատասխան լեզվական միջոցների ընտրության և խոսքի կառուցման յուրահատկություն, այլև լեզվի տարբերակային ձևեր, որ ոճաբանական գրականության մեջ անվանում են լեզվի գործառական ոճեր:

2. Ոճական միջոցներ: Լեզուն կառուցվածքային բարդ համակարգ է՝ բաղկացած իրար հետ սերտորեն կապված տարբեր մակարդակներից՝ հնչույթային, ձևույթային, բառային և քերականական:

Լեզվական միջոցների հարստությունը բազմակողմանիորեն դրսևորվում է հաղորդակցման ընթացքում, խոսքային գործունեության տարբեր ոլորտներում: Եվ նայած այն բանին, թե խոսողն ինչ շափով է օգտվում լեզվական միջոցներից, դրանով էլ որոշվում է նրա խոսքի մակարդակը: Սակայն խոսքի ուսումնասիրությունը չի սահմանափակվում նրանով, թե խոսողը լեզվական ինչ միջոցներից է օգտվում: Առավել կարևոր է բացահայտել մտածողության և լեզվի կապն ու փոխհարաբերությունը, որ մեզ տանում է ոճագիտության բնագավառը, քանի որ, ինչպես նկատում է Շ. Բալլին, ոճագիտության առարկան ոչ թե միտքն է, այլ մտքի բառային արտահայտությունը⁷:

Լեզվական միջոցները խոսքի մեջ ունենում են ամենատարբեր կիրառություններ և հաճախ բացի իրենց հիմնական իմաստներից ձեռք են բերում լրացուցիչ իմաստներ՝ արտահայտելով խոսողի վերաբերմունքն ու գնահատականը առարկաների ու երևույթների նկատմամբ, կարճ ասած՝ ստանում են ոճական արժեք կամ նշանակություն: Բացի դրանից մարդկային գործունեության յուրաքանչյուր բնագավառ իրացվում է հասարակական գիտակցության մեջ լեզվական միջոցներով: Խոսքային գործունեության մեջ լեզվական այդ միջոցները հաղորդակցական-գործառութային դերով պայմանավորված՝ ձեռք են բերում լրացուցիչ, երկրորդական նշանակություններ, որոնք հավելվում են դրանց առարկայական-տրամաբանական իմաստներին: Հետևաբար, լեզվական միավորի՝ խոսքային պայմաններում, կիրառության շնորհիվ ձեռք բերած այդ նոր, լրացուցիչ նշանակությունն ստանում է ոճական արժեք՝ դառնալով այս կամ այն բնագավառում գործածվող լեզվական միջոցի իմաստին զուգահեռ ածանցյալ իմաստ:

Անառարկելի է, որ ոճական միջոցների հիմքը լեզվական իրողություններն են: Դրանք լեզվից դուրս գտնվող ինչ-որ հատուկ միջոցներ չեն: Լեզվական միջոցների ոճական երանգները պայմանավորված են կա՛մ դրանց իմաստային կառուցվածքի մեջ մտնող լրացուցիչ, հավելյալ իմաստներով, կա՛մ դրանց՝ խոսքի մեջ ձեռք բերած կիրառական դերով և, հետևաբար, կարևոր են խոսքի տիպերի ոճական հատկանիշները բացահայտելու առումով: Ճիշտ է նկատված, որ լեզվական միջոցներն ունեն երկակի դեր. մի կողմից՝ դրանք

⁶ Տե՛ս Բ. Գ. Пиотровский, Очерки по стилистике французского языка. II, 1960, էջ 4:

⁷ Տե՛ս Շ. Բալլի, նշվ. աշխ., էջ 30:

լեզվական միջոցներ են, լեզվական համակարգի փաստեր, մյուս կողմից՝ ոճական իրողություններ⁸:

Ոճաբանական գրականության մեջ տարբեր կարծիքներ կան այն հարցի շուրջ, թե ոճական միջոցներ ասելով ինչ պիտի նկատի ունենալ, միայն հուզաարտահայտչական միջոցները, թե՞ նաև լեզվական այլ միջոցներ: Չխորանալով այդ տարակարծությունների մեջ՝ ասենք, որ անկախ մտեցումների տարբերություններից՝ պետք է ընդունել մի ճշմարտություն, որ ոճական միջոցների հիմքը լեզվական իրողություններն են՝ բառերը, նույնիսկ հնչյունները, բառաձևերը, շարահյուսական տարբեր կառույցները, շարադասությունը և այլն, որոնք օժտված են ոճական հարուստ ու բազմազան հնարավորություններով և խոսքի տարբեր տիպերում, լեզվի գործառական տարբեր ոճերում ունենում են բազմազան դրսևորումներ:

Լեզվական ամեն մի իրողություն կարող է խոսքային պայմաններում հանդես գալ որպես ոճական միջոց, և դա պայմանավորված է ինչպես այդ միջոցների բնույթով, այնպես էլ գործառական դերով:

Ոճական միջոցները բաժանվում են երկու խմբի՝ 1. Ոճականորեն շեղոք միավորներ և 2. Ոճական երանգավորում ունեցող լեզվական միավորներ: Նրկատենք, որ որոշ ուսումնասիրողներ ժխտում են շեղոք միավորների գոյությունը լեզվում. «Բոլոր բառերը ոճական արժեք ունեն, ոճականորեն շեղոք բառեր չկան»⁹: Այս մտեցումը վիճելի է:

1. Լեզվական շեղոք միավորները ոճականորեն նշույթավորված չեն, չունեն այսպես ասած «ոճական անձնագիր»: Ոճականորեն շեղոք միավորները կարող են գործածվել հաղորդակցման տարբեր ոլորտներում՝ խոսքին չհաղորդելով ոճական որևէ երանգ: Դրանք կազմում են լեզվական միջոցների հիմնական մասը: Այսպես, օրինակ, ոճական ինչ երանգ կարող են ունենալ հետևյալ համագործածական բառերը, մասնավանդ եթե դրանք գործածվում են իրենց ուղղակի իմաստներով, բառային հիմնական նշանակությամբ՝ հաց, ջուր, հայր, մայր, խոսել, կառնալ, կարկաչել, ժպիտ, սպիտակ, մաճուր, սեղան, գնալ, գալ և այլն:

Նման բազմաթիվ բառեր շեղոք են ոճական առումով, Դրանք, այդ կարգի բառերը, անշուշտ, խոսքային պայմաններում, յուրահատուկ կիրառության շնորհիվ կարող են ձեռք բերել ոճական երանգավորում, ունենալ ոճական արժեք: Համեմատենք հետևյալ օրինակները. Նա բարձր է խոսում: Հեքիաթդ անվերջ օրորում, Իլիկդ խոսում է անուշ (ՎՏ): Ակնհայտ է, որ երկրորդ օրինակում ընդգծված բառն ունի ոճական արժեք: Բայց դա մեզ հիմք չի տալիս ժխտելու շեղոք բառապաշարի գոյությունը լեզվում: Ասվածին կարելի է ավելացնել և այն, որ գիտական-մասնագիտական բառապաշարը, որ հիմնականում ունի տերմինային արժեք, շեղոք է: Չեղոք են նաև մենիմաստ բառերը (հինգհարկանի, տասնմեկ, եռահարկ և այլն):

2. Ոճական երանգավորում ունեցող միջոցներն իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ 1. հուզաարտահայտչական ոճական երանգներ, 2. գործառական-ոճական երանգներ:

Ոճական երանգավորումը հիմնականում հատուկ է բառային մակարդակին, բայց կարող է վերաբերել նաև ձևաբանական ու շարահյուսական միջոցներին:

Ժամանակակից ոճագիտության մեջ լեզվական միջոցների նման տարբերակումը, իհարկե, նորություն չէ: Դեռ դարասկզբին շվեյցարացի ոճագետ Շ. Բալլին ոճական երանգավորում ունեցող միավորների երկու ենթատեսակ

⁸ Տե՛ս «Стилистические исследования», М., 1972, էջ 8:

⁹ Տե՛ս Ս. Մելնոնյան, նշվ. աշխ., էջ 43:

է նշում՝ ա) սեփական երանգավորում ունեցող լեզվական միջոցներ և բ) սոսցիալական երանգավորում ունեցող լեզվական միջոցներ: Առաջինը ոճական այն երանգներն են, որ հատուկ են բառերին և անբաժան են նրանց նշանակություններից, իսկ երկրորդը լեզվական միավորի՝ գործառական բնույթով պայմանավորված ոճական երանգներն են, որոնք պատկերացում են տալիս մարդկային գործունեության այս կամ այն ոլորտի մասին և բնորոշ են սոցիալական տարբեր խմբերի¹⁰: Բալլիի այս դասակարգումն իր արտահայտությունն է գտել մեր օրերի ոճաբանական ուսումնասիրություններում, հանգամանք, որ ցույց է տալիս թե որքան ճշգրիտ է նշանավոր ոճագետի կատարած դասակարգումը: Եվ իրոք, լեզվական միջոցների ոճաբանական քննությունը ցույց է տալիս, որ դրանց մի մասն իր հիմնական իմաստին զուգահեռ ունենում է լրացուցիչ հուզարտահայտչական երանգներ՝ անկախ խոսքից, մյուս մասը՝ գործառական-ոճական երանգներ: Այսպես, հետևյալ բառերն ու բառակապակցությունները հուշում են, թե հասարակական կյանքի որ բնագավառում, լեզվի գործառական որ ոճում են գործածվում, այսինքն՝ ունեն գործառական-ոճական երանգ: Օրինակ՝ գործով վկա, վրաերբի ենթարկել, վազանց կատարել, նախաֆենություն, հետաֆենություն, ի տեօրինություն և այլ բառեր ու արտահայտություններ հատուկ են պաշտոնական ոճին, պետավտոտեսչության արձանագրությունների լեզվին, հնչույթ, ձեռույթ, ֆերականական կարգ, ածանցում, հավասարաշափ շարժում, ազատ անկում, շրթայական ռեակցիա, դիֆերենցիալ հավասարում բառերն ու բառակապակցությունները՝ գիտական ոճին:

Ավելացնենք միայն, որ ոճական միջոցների մեջ գլխավոր դերը պատկանում է հոմանիշությանը, որը ոճագիտության առանցքային հարցերից է: Հոմանիշություն տերմինը տվյալ դեպքում գործածում ենք լայն առումով, այսինքն՝ նկատի ունենք ոչ միայն բառային, այլև քերականական հոմանիշները:

3. Ոճական երանգավորում: Ոճագետ-լեզվաբանների մեծ մասը ոճագիտական հասկացությունների թվին դասում է նաև ոճական երանգավորումը: Ոճական միջոցներ, ոճական երանգավորում և ոճական նշանակություն հասկացությունները սերտորեն փոխկապված են: Պետք է ասել, սակայն, որ այս հասկացությունների ըմբռնման հարցում հստակություն և միասնական կարծիք չկա: Ավելին, երբեմն գործածվում են տերմինային այնպիսի կապակցություններ, որոնց իմաստը խիստ անորոշ է: Այսպես, օրինակ, հանդիպում ենք հուզական իմաստ տերմինային կապակցությանը, որը, մեր կարծիքով, խիստ անհաշող է, քանի որ անորոշ է նրա իմաստը: Որոշ մասնագետներ նույնիսկ փորձում են ինչ-որ տարբերություններ տեսնել հուզական իմաստի և ոճական երանգավորման միջև: Օրինակ՝ Ի. Ռ. Գալպերինը գրում է. «Ինչ-որ նուրբ տարբերություն կա հուզական իմաստի և հուզական երանգավորման միջև, շնայած որ երբեմն դժվար է տարբերություն դնել այդ երկու հասկացությունների միջև: Հուզական իմաստը բառին հատուկ զգացմունքների, վերաբերմունքի, գնահատողական արտահայտությունն է»¹¹ (ընդգծումը մերն է— Ա. Մ.):

Դժվար չէ նկատել, որ այստեղ ոճական երանգավորումից արհեստականորեն անջատված և նրան հակադրված է հուզական իմաստը: Այն, ինչ հեղինակն անվանում է «հուզական իմաստ» (զգացմունքի, վերաբերմունքի, գնահատության արտահայտություն), բառի նշանակությանը հավելվող, նրան ուղեկցող լրացուցիչ (կոնոտացիոն) իմաստներն են, որոնք մտնում են «ոճա-

¹⁰ Տե՛ս Շ. Բալլի, *Եզվ. աշխ.*, էջ 238:

¹¹ И. Р. Гальперин, *Очерки по стилистике английского языка*, М., 1958, с. 118.

կան երանգավորում» հասկացութեան մեջ և որոշում են լեզվական տվյալ միավորի ոճական արժեքը գործածութեան տարբեր ոլորտներում:

Արդ, ի՞նչ ենք հասկանում ոճական երանգավորում ասելով: Ոճական երանգավորումը լեզվական միավորների (հիմնականում բառային մակարդակի) նշանակութեանն ուղեկցող այն լրացուցիչ իմաստներն են, որոնք սահմանափակում են այդ միավորների կիրառական հնարավորությունները¹²:

Ի տարբերություն գործառական-ոճական երանգավորման, հուզաարտահայտչական երանգավորումը հատուկ է բառին, անբաժան է նրա բառային նշանակութունից, մտնում է նրա իմաստային կառուցվածքի մեջ և պայմանավորված չէ կիրառությամբ, բայց ոճական արժեք է ձեռք բերում խոսքի մեջ: Որոշ մասնագետներ հենց դրանում են տեսնում հուզաարտահայտչական և ոճական երանգների տարբերությունը: «Ոճական նշանակությամբ օժտված են լեզվական այն միավորները, որոնք ունեն կայուն, սկզբունքորեն խոսքից անկախ (ընդգծումը մերն է— Ա. Մ.) հուզաարտահայտչական երանգավորում»¹³:

Իհարկե, հուզաարտահայտչական ոճական երանգավորում ունեցող բառերը կարող են ունենալ տարբեր նրբերանգներ՝ փաղաքշական, մտերմական, հեգնական, հանդիսավոր և այլն: Ավելին, դրանք կարող են պարունակել գնահատողական վերաբերմունքային (դրական կամ բացասական) իմաստային երանգներ: Ոճաբանական գրականության մեջ նշվում են հուզաարտահայտչական բովանդակությունը բացահայտող հետևյալ հասկացությունները՝ հուզականություն, գնահատողականություն և արտահայտչականություն¹⁴:

Հուզաարտահայտչական երանգը կապվում է խոսողի հոգեկան ապրումների, հուզական վերաբերմունքի դրսևորման հետ: Հուզական և գնահատողական երանգները հաճախ կարող են միասնաբար հանդես գալ լեզվական միավորի մեջ, բայց դրանք բացարձակ նույնը չեն: Օրինակ՝ ձայնարկություններն ունեն հուզական երանգ, քանի որ արտահայտում են խոսողի զգացական վերաբերմունքը, բայց գնահատողական տարր չունեն: Կան բառեր էլ, որ ունեն գնահատողական իմաստ, բայց հուզական չեն (տգեղ, տխեղծ, ալլանդակ, հիանալի, բարի, ազնիվ, շար և այլն)¹⁵:

4. Ոճական նշանակություն (կամ արժեք): Ոճագիտության հիմնական հասկացություններից մեկն էլ ոճագիտական նշանակությունն է, որը սերտորեն առնչվում է ոճական երանգավորման հետ: Դրանք փաստորեն նույն երեվույթի երկու տարբեր կողմերն են: Պատահական չէ, որ գրականության մեջ ոճական երանգավորում և ոճական նշանակություն կապակցությունները գործածվել են որպես համարժեք, հոմանիշ տերմիններ: Ավելին, լեզվական միավորի ոճական երանգը դիտվել է որպես ոճական նշանակություն: Օրինակ՝ Տ. Գ. Վինոկուրը իր մի հոդվածում ոճական երանգավորումը գործածում է հենց ոճական նշանակություն իմաստով. «Լկինը և ուրիշ ուսումնասիրողներ էլ բառի «կոնկրետ դերը» խոսքում հակադրում են նրա ոճական երանգին, այսինքն՝ ոճական նշանակությանը»¹⁶ (ընդգծումը մերն է— Ա. Մ.): Այդու-

¹² Տե՛ս Ա. Մ. Կոժինա, նշվ. աշխ., էջ 27:

¹³ «Стилистические исследования», с. 16.

¹⁴ Տե՛ս А. Н. Кожин, О. А. Крылова, В. В. Одинцов, Функциональные типы русской речи, М., 1982, էջ 71:

¹⁵ Ժամանակակից հայերենի բառապաշարի ոճաբանական դասակարգման և հուզաարտահայտչական ու գործառական ոճական երանգավորման մասին՝ հանգամանորեն խոսվում է Ս. էլոյանի «Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն» արժեքավոր աշխատության մեջ, Երևան, 1989, էջ 13—63:

¹⁶ «Стилистические исследования», с. 26.

հանդերձ նշենք, որ Վինոկուրի նույն հողվածում նկատվում է այդ երկու հասկացությունները տարբերակելու միտում. «Ոճական նշանակությունն օրինաչափ կլինի բնորոշել որպես ավանդույթի (կոլեկտիվ գործածության) միավոր»¹⁷:

Կարելի է ասել, որ ոճաբանական շատ ուսումնասիրություններում էլ այդ հասկացությունները հստակորեն տարբերակված չեն: Այսպես, օրինակ, Ն. Մ. Կոժինայի գրքում ոճական երանգավորմանը տրված բնորոշումը գրեթե նույնությամբ վերագրվում է ոճական նշանակությանը. «Ոճական նշանակությունը բառի առարկայական կամ քերականական նշանակությանը հավելվող այն լրացուցիչ հատկանիշներն են, որոնք ունեն կայուն բնույթ, մտնում են լեզվական միավորի իմաստային կառուցվածքի մեջ և դրսևորվում են որոշակի պայմաններում: Ոճական նշանակությունը լեզվական միավորի իմաստային կառուցվածքի բաղադրիչ մասն է»¹⁸:

Նկատենք, որ այդ հասկացությունների տարբերակումը տեսնում ենք հատկապես վերջին տարիների ոճաբանական ուսումնասիրություններում:

Իսկ իրականում ի՞նչ ենք հասկանում ռեական նշանակություն (կամ աբսթեկ) ասելով: Ոճական երանգավորում և ոճական նշանակություն հակացությունները, ինչպես արդեն ասվել է, սերտորեն փոխկապված, միմյանցով պայմանավորված հասկացություններ են, այն տարբերությամբ միայն, որ ոճական նշանակությունն ավելի կայուն հատկանիշ է, ունենում է համընդհանուր արժեքավորում և ձևավորվում է լեզվական միջոցների ինչպես հուզաարտահայտչական, այնպես էլ գործառական-ոճական երանգներից:

Մեզ հետաքրքրող հարցի մասին Տ. Գ. Վինոկուրը հետևյալ կարծիքն է հայտնում. «Ըթե իրականում ոճական լրացուցիչ երանգները լեզվական իրողությունների մեջ մեզ ներկայանում են որպես այդ միավորների նշանակության կայուն հատկանիշ, ապա դա բավական հիմք է, որ բառական ու քերականական իմաստներից բացի խոսենք դրանց ոճական նշանակության մասին»¹⁹:

Չնայած որ ռեական նշանակություն և ռեական երանգավորում հասկացությունները սերտորեն փոխկապված են, այդուհանդերձ դրանք չի կարելի նույնացնել և պետք է տարբերակվեն: Քննարկվող հարցի մեջ պարզություն մտցնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում կանգ առնել այդ հասկացությունների ինչպես տարբերակիչ հատկանիշների, այնպես էլ ընդհանրությունների վրա:

Մեր կարծիքով այդ հասկացությունները հստակ շտաբերակելու հիմնական պատճառը լեզվական և խոսքային մակարդակների նույնացումն է: Այս առումով էլ կարևոր է պարզել այն հարցը, թե ոճական նշանակությունը խոսքային երևույթ է, թե՞ հատուկ է լեզվին, լեզվական իրողություն է: Այս հարցում էլ ոճագետների կարծիքները տարբեր են: Քանի որ լեզվական միավորների հուզաարտահայտչական ու գործառական երանգները ավելի ցայտուն դրսևորվում են խոսքում, ուստի որոշ մասնագետներ իրավացիորեն ռեական նշանակությունը համարում են միայն խոսքային երևույթ: Այսպես, օրինակ, Ռ. Գ. Գալպերինը այն դիտում է միայն խոսքային իրողություն²⁰: Բայց Վինոկուրն առարկում է այդ տեսակետին: Նրա կարծիքով ոճական նշանակությունը ոչ միայն խոսքային երևույթ է, այլև լեզվական²¹: Մեր կարծիքով Վի-

¹⁷ Նույն տեղում, էջ 33:

¹⁸ Ն. Մ. Կոժինա, նշվ. աշխ., էջ 32:

¹⁹ «Стилистические исследования», с. 14.

²⁰ Տե՛ս Ռ. Ռ. Գալպերին, նշվ. աշխ., էջ 18:

²¹ Տե՛ս «Стилистические исследования», էջ 27:

նոկուրի պնդման մեջ նույնացված են ոճական նշանակություն և ոճական երանգավորում հասկացությունները: Մենք պաշտպանում ենք այն ոճագետների կարծիքը, որոնք ոճական նշանակությունը համարում են խոսքային երևույթ: Հենց դրանում պետք է տեսնել այդ հասկացությունների հիմնական տարբերություններից մեկը: Անառարկելի ճշմարտություն է, որ ոչ միայն բաների, այլև լեզվական ամեն մի իրողության ոճական նշանակությունը լիարժեք դրսևորվում է միայն հաղորդակցման գործընթացում, կոնկրետ կիրառության մեջ, ուրիշ բաների ու խոսքային միջավայրում լեզվական այլ միավորների հետ ունեցած հարաբերություններում: Իսկ ոճական երանգավորումը լեզվական միավորը կարող է ունենալ անկախ խոսքից: Այսպես, օրինակ, կան բաներ, որոնք անկախ խոսքից օժտված են ոճական երանգներով՝ միտք անել—մտածել, միտք բերել—հիշել, կախ տալ—կախել, ձեռք մեկնել—օգնել, ականջ դնել—լսել, զավակ—բալա, մայրիկ—մերիկ, հարևան—դրկից, հյուր—դռնախ բառերի համեմատությունից դժվար չէ եզրակացնել, որ այդ հոմանիշներից մեկն օժտված է ոճական երանգով: Ոճական այդ երանգները, անշուշտ, հիմք են դառնում ոճական նշանակությունների համար, որ դրսևորվում է խոսքային համապատասխան միջավայրում: Հենց այստեղ է, որ խաչաձևվում են ոճական երանգներն ու ոճական նշանակությունը: Այդ բաների ոճական երանգները, իհարկե, խոսքային շեն, ձեռք չեն բերվում խոսքում, այլ հատուկ են տվյալ բառային միավորներին: Այդ կարգի բաները խոսքում գործածվելիս նրան տալիս են արդեն իրենց ունեցած հուզաարտահայտչական երանգները՝ դրսևորելով ոճական որոշակի արժեք: Մեր միտքը պարզելու համար բերենք միայն մեկ օրինակ.

- էդ ի՞նչ կրակ կանես, մերիկ,
- Բալաս, վերքիդ դեղ կեփեմ,
- Ախ, իմ վերքը սիրտս է, մերիկ,
- Դեղ ու դարմանդ ի՞նչ անեմ...

Հասկանալի է, որ ընդգծված բաների ժողովրդախոսակցական երանգը պայմանավորված չէ կիրառությամբ, բայց դրանք իրենց ոճական նշանակությունն ու արտահայտչական հնարավորությունները դրսևորում են խոսքում, այլ բաների հետ ունեցած կապակցությունների շնորհիվ: Հետևաբար, անկախ խոսքից լեզվի տարբեր ոճերում ու խոսքի տարբեր տիպերում ոճականորեն «չեզոք» բաների կողքին գոյություն ունեն ոճական ու հուզաարտահայտչական երանգավորում ունեցող բազմաթիվ բաներ, որոնք իրենց ոճական արժեքով հակադրվում են նույն իմաստային դաշտի մեջ մտնող համապատասխան հոմանիշներին: Դա պարզ երևում է հետևյալ բառազույգերի համեմատությունից. եղբայր—ախպեք, ֆուր—ֆուրիկ, ջահել—երիտասարդ, գեղեցիկ—սիրուն, պարանոց—վիզ—շլիմֆ, անհույս—անզյուժման, շրթունք—պրոշ, այտ—թուշ, սևահեր—թուխամազ և այլն: Ավելորդ է ասել, որ համապատասխան հոմանիշների մեջ եղած հուզաարտահայտչական ոճական երանգները նրանց բառային նշանակություններին ուղեկցող իմաստներ են՝ անկախ խոսքից:

Արդ, ի՞նչ է ոճական նշանակությունը և ինչո՞վ է այն տարբերվում ոճական երանգավորումից: 1) Ոճական նշանակությունը, ի տարբերություն ոճական երանգավորման, խոսքային երևույթ է: 2) Մեր պատկերացումով այդ հասկացությունները տարբերվում են նաև նրանով, որ ոճական նշանակությունն ավելի լայն հասկացություն է, քան ոճական երանգավորումը: Եթե մենք նույնացնենք այդ հասկացությունները, այսինքն՝ ոճական նշանակություն ասելով հասկանանք նաև ոճական երանգավորումը, ապա փաստորեն կանտեսենք ոճականորեն «չեզոք» համարված լեզվական այն միջոցները, ո-

որոնք իրենց ոճական երանյն ու դրանով պայմանավորված ոճական նշանակությունը ձեռք են բերում խոսքում, կոնկրետ կիրառության շնորհիվ: Այսպես, հոռանջել, դարսել, աղմուկ բառերը ոճականորեն շեղոք են, բայց դրանք, ինչպես և այդպիսին համարվող ամեն մի բառ, յուրահատուկ կիրառության շնորհիվ կարող են վերախմաստավորվել և խոսքում ձեռք բերել ոճական նշանակություն:

Թանձրանում են դանդաղ լույսերը՝ թույլ, դեղին,
Հոռանջում են ծխով մոխրամանները բաց,
Գոներն իրար վրա ազմուկներ են դարսում: (Ռ. Գավոյան)

Ավելացնենք, որ բազմիմաստ բառերի իմաստային նրբություններն ու ոճական արտահայտչական հնարավորությունները նույնպես դրսևորվում են խոսքում: Երրորդ՝ ոճական նշանակությունը, ի տարբերություն ոճական երանգավորման, ձևավորվում է լեզվական միավորների հատուկ հուզաարտահայտչական երանգներից, որ մատնացույց են անում, թե տվյալ լեզվական միավորը հասարակական գործունեության որ բնագավառում է գործածվում: Զորրորդ՝ ոճական նշանակությունն ավելի կայուն հատկանիշ է, քան ոճական երանգավորումը:

Այդ հասկացություններն ունեն նաև ընդհանրություններ: Ի՞նչ հուզաարտահայտչական երանգները, և՛ ոճական նշանակությունը բառին կամ լեզվական միավորին հավելվող լրացուցիչ (կոնոտացիոն) իմաստներն են, որոնք ուղեկցում են նրանց առարկայական-տրամաբանական կամ քերականական նշանակություններին:

Բառը խոսքի մեջ գործածվում է ամենից առաջ իր դեմոտատիվ նշանակությամբ, այսինքն՝ հասկացական բովանդակության հիմնական արժեքով՝ ապահովելով հաղորդակցումը այդ լեզվով խոսող մարդկանց միջև: Ըստ որում բառը, եթե անգամ բազմիմաստ է, խոսքի մեջ գործածվում է միշտ մեկ իմաստով. «Բառը խոսքում ամեն անգամ համապատասխանում է մտքի մի գործողությանը և ոչ թե մի քանի, այսինքն՝ ամեն անգամ, թե ինչպես է արտասանվում և հասկացվում, ունենում է միայն մեկ նշանակություն»²²:

Բայց լեզվում, ինչպես տեսանք, կան շատ բառեր, որոնք իրենց հիմնական իմաստին զուգահեռ ունենում են լրացուցիչ հուզաարտահայտչական ոճական երանգներ, որոնք խոսքից անկախ այդ բառերն օժտում են ոճական նշանակությամբ կամ արժեքով: Եվ քանի որ բառի առարկայական-հասկացութային և ոճական նշանակություններն անխզելիորեն փոխկապված են, ուստիև ոճական նշանակություններով օժտված են լեզվական այն միավորները, որոնք ունեն կայուն և խոսքից անկախ հուզաարտահայտչական երանգավորում: Շատ ոճագետների կարծիքով հենց այդ է գործառական ոճական և կայուն երանգներ ունեցող լեզվական միավորների էական տարբերությունը:

Բառերին հատուկ այդ լրացուցիչ իմաստները, որ ոճական արժեք են ստանում խոսքում, մտնում են բառի իմաստային կառուցվածքի մեջ: Այդ տեսակետը պնդում է ոճագետների մեծ մասը. «Ոճական-արտահայտչական երանգը հատուկ է բառին կամ արտահայտությանը: Այն նույնպես նրա անբաժան հատկանիշն է, ինչպես բառային կամ քերականական նշանակությունը»²³: Գրեթե նույն կարծիքն է արտահայտում Տ. Գ. Վինոկուրը. «Ժազումնաբանորեն բառին հատուկ և կայուն ձևով նրան ամրացված հուզական երանգը անբաժան է բառի նշանակությունից»²⁴:

²² А. А. Потебня, Из записок по русской грамматике, М., 1958, с. 15.

²³ «Вопросы языкознания», 1954, № 5, с. 78.

²⁴ «Стилистические исследования», с. 14.

Սակայն պետք է ասել, որ ոճական նշանակությունները միայն բառապաշարային մակարդակին վերաբերող իրողություններ չեն: Դրանք հավասարապես կարող են վերաբերել նաև քերականական մակարդակին՝ ձևաբանական ու շարահյուսական իրողություններին, ավելի կոնկրետ՝ քերականական իմաստներին: Տվյալ քերականական կարգը, խոսքային իրադրությամբ պայմանավորված, կարող է ձեռք բերել իմաստային ու ոճական նրբերանգներ, որոնք կարող են հուզաարտահայտչական դեր ունենալ խոսքային տվյալ միջավայրում, դրսևորել ոճական արժեք: Հետևաբար, քերականությունն էլ իր հերթին ոճական առումով լեզվական միջոցների օգտագործման լայն հնարավորություններ ունի: Դա վերաբերում է ձևաբանությանը, առավել ևս շարահյուսությանը: Այս առումով ոճագիտության համար ոչ պակաս կարևոր է քերականական կարգերի ու խոսքի մասերի ոճական նրբիմաստների բացահայտումն ու բնութագրումը:

Սակայն այս հարցում, մեր կարծիքով, թույլ է տրվում մի էական սխալ հավասարության նշան է դրվում բառային ու քերականական մակարդակների լեզվական միավորների ոճական ու արտահայտչական նշանակությունների միջև: Եթե ոճական ու արտահայտչական երանգներ ունեցող բառերի մեջ այդ երանգները նրանց իմաստից անջատ չեն, ապա նույնը չի կարելի ասել քերականական մակարդակի լեզվական միավորների մասին, քանի որ վերջիններս իրենց ոճական երանգները և դրանցով պայմանավորված ոճական նշանակությունները ձեռք են բերում միայն խոսքի մեջ, այսինքն՝ ունենում են միայն կիրառական-ոճական երանգ, որը բնականորեն չի մտնում քերականական կարգերի իմաստային շրջանակների մեջ: Քերականական կարգերը սահմանելիս նկատի չենք ունենում գործառական-ոճական երանգները, այլ ելնում ենք նրանց առաջնային քերականական իմաստներից: Այսպես, օրինակ, սահմանական եղանակի ներկա ժամանակաձևը ցույց է տալիս խոսելու պահին ստույգ կատարվող, ընթացքի մեջ գտնվող գործողություն (լսարանում դաս են պարապում. ուսանողներն ուշադիր լսում են դասախոսին): Բայց այդ եղանակի բայաձևերը բացի այդ հիմնական իմաստից ունենում են նաև երկրորդական բազմազան կիրառություններ, որոնք արդեն սահմանական եղանակի ոճական կիրառություններ են: Այսպես, այդ ժամանակաձևը կարող է ցույց տալ և այնպիսի գործողություն, որ չի կապվում խոսելու պահի, կոնկրետ ժամանակի հետ, այլ վերաբերում է բոլոր ժամանակներին (ընդհանուր ներկա). կրակն այրում է: Մարդը մեռնում է, անունն է մնում): Ավելին, այդ ժամանակաձևը կարող է արտահայտել անցյալում կատարված և նույնիսկ կատարվելիք գործողություններ²⁵: Օրինակ՝ Այդ տարիներին աշխատում էի գավառական մի փոքրիկ քաղաքում: Մի օր էլ վե՛ր եմ կենում և տեսնում, որ փողոցները լցվել են զինվորներով: Կամ՝ Մի շաբաթ հետո մեկնում եմ գործուղման: Սակայն այս բոլոր իմաստները դրսևորվում են միայն խոսքային միջավայրում, քանի որ խոսքից դուրս այդ ժամանակի բայաձևերը հրեք չեն կարող այդպիսի լրացուցիչ իմաստներ արտահայտել: Կամ՝ հայտնի իրողություն է, որ բայն ունի երեք դեմք՝ առաջին, երկրորդ և երրորդ: Բայի դեմքի կարգից գիտենք, որ դրանք արտահայտում են կամ խոսողի, կամ խոսակցի, կամ մի երրորդ անձի գործողություն: Սակայն խոսքում հաճախ բայի գեմքի կարգն էլ կարող է հանդես գալ ոճական կիրառություններով: Այսպես, տվյալ դեմքով արտահայտվող բայաձևի դիմային իմաստը խոսքում կարող է չկոնկրետանալ, այսինքն՝ շարտահայտել այս կամ այն դեմքի իմաստը. այլ

²⁵ Տե՛ս Գ. Պողոսյան, Բայի եզանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, 1959, էջ 40:

ունենալ ընդհանուր դիմային նշանակություն: Օրինակ՝ ծնվում եմ ակամա, ապրում եմ զարմացած, մեռնում եմ կարոտով... Հնդգծված բայաձևերն արտահայտված են հոգնակի առաջին դեմքով, բայց վերաբերում են բոլոր դեմքերին և ունեն ընդհանուր դիմային նշանակություն: Կամ՝

Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին,
Քան թե հավատա կնոջ Երդումին... (Ավ. Բասակյան)

Այս օրինակում էլ երկրորդ դեմքի բայաձևերն ունեն ընդհանուր դիմային նշանակություն, այսինքն՝ շին վերաբերում միայն երկրորդ դեմքին, այլ բոլոր դեմքերին:

Վերցնենք մեկ այլ օրինակ. անձնական դերանունները ցույց են տալիս անձ՝ դիմային հարաբերությամբ: Բայց կիրառության մեջ, հատկապես գեղարվեստական խոսքում, կարող են անձ ցույց չտալ, որովհետև գրողը հաճախ անձնավորում է բնության երևույթները: Օրինակ՝

Դու քաղցր ես, հող իմ հայրենի,
Զկա քեզնից պայծառ անուն...
Դու, Արագած արմատ վահան կայծակեղեն թրերի...

Բայց մենք՝ կարող ենք կիրառությամբ պայմանավորված այս լրացուցիչ ոճական նշանակությունները տարածել այդ դերանվան քերականական բնորոշման վրա և ասել, թե անձնական դերանունը կարող է անձ ցույց չտալ: Կարծում ենք՝ ոչ: Նույնը վերաբերում է գոյականի քերականական կարգերին: Թանձրացական և վերացական գոյականները, իրենց իմաստային յուրահատկություններով պայմանավորած, ունենում են քերականական որոշ տարբերություններ, որոնցից մեկն էլ այն է, որ առաջինները սովորաբար հոգնակի թիվ են ստանում, երկրորդները՝ ոչ: Չենք ասում կյանքեք, սերեր: Բայց խոսքում վերացական գոյականներն էլ երբեմն կարող են հանդես գալ հոգնակի թվով՝ ձեռք բերելով ոճական որոշակի արժեք:

Ահա կրկին իմ դեմ ծաղիկներ ու կյանքեք,
Քո գարունքին բացված ծաղիկների նման...
Ու իբր հիշատակ կյանքեքից սիրուն
Մնում են միայն այլանդակ զանգեր...
Իմ սրտում ունեմ ես անթիվ սերեր... (Ն. Զարենց)

Այս օրինակներում ընդգծված վերացական գոյականները վերածվել են թանձրացականի՝ շնորհիվ իրենց յուրահատուկ կիրառությունների:

Հասկանալի է, որ գոյականի քերականական կարգերը սահմանելիս նույնպես ելնում ենք դրանց ընդհանուր հատկանիշներից՝ առանց նկատի ունենալու, թե դրանք խոսքում ինչ երկրորդական ոճական կիրառություններ կարող են ստանալ: Ասվածից հետևում է, որ եթե բառային մակարդակի լեզվական միավորների հուզաարտահայտչական-ոճական երանգները անբաժան են նրանց իմաստներից և մտնում են այդ բառերի իմաստային կառուցվածքի մեջ, ապա քերականական մակարդակի լեզվական իրողությունների ոճական ու արտահայտչական երանգները պայմանավորված են միայն կիրառություններով և շին մտնում նրանց իմաստային շրջանակների մեջ:

Ամփոփենք:

Չնայած ոճագիտական հիմնական հասկացությունների մեկնաբանման մեջ եղած տարակարծություններին, իսկ դրանք իրոք կան, քանի որ տարբեր մակարդակների լեզվական միավորների՝ բառերի, բառաձևերի ու քերականական իրողությունների ոճական արժեքն ու բնույթը այնպիսի ցայտունությամբ հանդես չի գալիս նրանց մեջ, ինչպես բառային ու քերականական իմաստ-

ները, այդուհանդերձ ոճագետ լեզվաբանները չեն վիճարկում այդ հասկացութիւնների գոյութիւնը:

Նշեցով ոճաբանական գիտութեան զարգացման ժամանակակից բժրոնումներից՝ կարող ենք ասել, որ ոճագիտական հիմնական հասկացութիւններն են՝ ոճ, ոճական երանգավորում, ոճական նշանակութիւն (կամ արժեք), ոճական միջոցներ, լեզվի գործառական ոճեր (կամ տարրերակային ձևեր):

А. А. МАРУТЯН — О некоторых стилистических понятиях. — Стилистика как лингвистическая дисциплина имеет свои особые категории и понятия. Однако надо подчеркнуть, что спорные вопросы и разногласия имеются не только в толковании предмета стилистики как науки, но и в интерпретации основных ее понятий. И это естественно: в единицах разных уровней языка (словах, словоформах, грамматических конструкциях) стилистическое значение проявляется не так рельефно, как лексическое и грамматическое значения.

В статье сделана попытка охарактеризовать некоторые основные понятия стилистики: стиль, стилистические средства, стилистическая окраска, стилистические значения, которым в литературе даются самые различные толкования. В отдельных случаях автор противостоит принятой точке зрения и дает новую интерпретацию некоторым обсуждаемым вопросам: о различиях и общности стилистического значения и стилистической окраски. Эмоционально-экспрессивная окраска входит в семантическую структуру слов, а стилистическая окраска грамматических категорий, по мнению автора, обусловлена только их употреблением в речи, то есть имеет функционально-стилевой характер.